ՀԱՍՏԱՏՎԱԾ Է	**ԳՐԱՆՑՎԱԾ Է**
«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության հիմնադիր ժողովի 27.11.2012թ. որոշմամբ	ՀՀ Կենտրոնական բանկում 05.02.2013 թ. Գրանցման համարը 38

Փոփոխված է

«ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՓԲԸ
բաժնետերերի
ընդհանուր ժողովի
11.04.2016թ. որոշմամբ

Ժողովի նախագահ
Մ.Մակիչյան

Փոփոխությունը գրանցված է

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Digitally signed by Arthur Javadyan
Date: 2016.05.13 19:45:05 GMT+04:00
Reason: Գրանցված է 11.05.2016թ.

________________Ա. Ջավադյան
(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Կրեդո ֆինանս» ունիվերսալ վարկային կազմակերպություն Փակ Բաժնետիրական ընկերություն

նոր խմբագրություն

Bella Gabrielyan

Digitally signed by Bella Gabrielyan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=CREDO FINANCE UCO CJSC, email=bgabrielyan@credofinance.am, cn=Bella Gabrielyan
Date: 2016.05.11 11:10:00 +04'00'

Երևան 2016

ԲԱԺԻՆ Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. “ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ” ունիվերսալ վարկային կազմակերպություն” փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ստեղծվել է Ընկերության հիմնադիրների 2012 թվականի նոյեմբերի 27-ի հիմնադիր ժողովի որոշմամբ:

1.2. Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի դրույթները պարտադիր են Ընկերության բոլոր մասնակիցների և կառավարման մարմինների համար:

1.3. Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է “Վարկային կազմակերպությունների մասին”, “Բաժնետիրական ընկերությունների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթներով:

1.4. Ընկերությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ ՀՀ կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցվելու օրվանից:

1.5. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն և օրենսդրությամբ սահմանված ֆինանսական գործառնություններ Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիա ստանալու օրվանից:

1.6. Ընկերության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը պատկանում է Ընկերությանը՝ սեփականության իրավունքով: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.7. Ընկերությունն ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույք (միջոցներ), օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և խորհրդանիշ, կարող է ունենալ իր անվամբ և խորհրդանիշով կլոր կնիք, դրոշմներ, բլանկներ և համարային կնիքներ Ընկերության տարածքային ստորաբաժանումների համար:

1.8. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, լինել հայցվոր կամ պատասխանող դատարանում:

1.9. Ընկերության գտնվելու վայրը (փոստային հասցեն) նրա մշտական գործող մարմնի (գլխավոր գրասենյակի) գտնվելու վայրն է: Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ **Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կիևյան 2-րդ նրբանցք, տուն 16**:

1.10. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

Հայերեն՝ **“ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ” Ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն**

Ռուսերեն՝ **Закрытое акционерное общество “КРЕДО ФИНАНС” Универсальная кредитная организация**

անգլերեն **“CREDO FINANCE” Universal Credit Organization Closed Joint-Stock Company**

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն **“ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ” ՈՒՎԿ ՓԲԸ**

ռուսերեն **ЗАО УКО “КРЕДО ФИНАНС”**

անգլերեն **“CREDO FINANCE” UCO CJSC**

1.11. Ընկերությունն իրավունք ունի.

ա) ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը, այլ օգտակար արդյունքը.

բ) ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական միջոցները, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր և փոխառություններ, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր.

գ) օտարել, ֆինանսական վարձակալության (լիզինգ) հանձնել, փոխանակել, օրենսդրությամբ

չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու.

դ) տարեկան ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո շահույթի մի մասը, բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափով և կարգով, փոխանցել կանոնադրական կապիտալ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնելով կանոնադրական կապիտալը,

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով վճարովի ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի ու քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից,

զ) այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ,

է) պահպանելով գործող օրենսդրության պահանջները՝ ստեղծել իրավաբանական անձինք կամ անդամակցել իրավաբանական անձանց միություններին,

ը) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

1.12. Ընկերությունը պարտավոր է.

ա) օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում, հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ և ՀՀ լիազորված պետական մարմիններ, հրապարակել ֆինանսական հաշվետվությունները.

բ) աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ.

գ) պատասխանատվություն կրել և հատուցել իր կողմից պատճառված վնասը՝ պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու, այլ անձանց իրավունքները խախտելու համար.

դ) ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության օրական, շաբաթական, ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով.

ե) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

1.13. Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել Ընկերությանը:

1.14. Ընկերությունն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

ԲԱԺԻՆ II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

2.1. Ընկերությունը կարող է օրենքով և Կենտրոնական բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում կամ օտարերկրյա պետություններում բացել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, որոնք կարող են գործել Կենտրոնական բանկում գրանցման պահից: Օտարերկրյա պետություններում Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են տվյալ պետության օրենսդրությանը և (կամ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

2.2. Ընկերության մասնաճյուղը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն է իրականացնում:

2.3. Ընկերության ներկայացուցչությունը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Ընկերության

անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառույթներ: Ներկայացուցչությունը ունիվերսալ վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու իրավունք չունի:

2.4. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները գործում են Ընկերության կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

2.5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների ստեղծումը, գրանցումը և գործունեության դադարումը, այդ թվում՝ ժամանակավորապես դադարեցումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.6. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Ընկերության խորհրդի կողմից և գործում են Ընկերության կողմից տրված լիազորագրերի կամ առանձնացված ստորաբաժանման կանոնադրության հիման վրա:

2.7. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության խորհրդի կողմից: Ընկերության առանձնացված ստորաբաժանումը հիմնադրված է համարվում Կենտրոնական բանկի կողմից գրանցման պահից:

2.8. Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվություն է կրում Ընկերությունը:

ԲԱԺԻՆ III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

3.1. Ընկերությունը վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները, բացառությամբ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխման գործարքներից և հրապարակային օֆերտաների միջոցով փոխառությունների ներգրավումից:

3.2. Ընկերությունը կարող է կնքել ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է ունիվերսալ վարկային կազմակերպության ֆինանսական գործառնություններ իրականացնելու, ինչպես նաև Ընկերության բնականոն գործունեությունն ապահովելու համար:

3.3. Ընկերությունը գլխավոր գրասենյակում իրականացնելու է ֆինանսական գործառնություններ բացառապես անկանխիկ եղանակով:

3.4. Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար դրանք թույլատրված չեն օրենքով կամ իրավական այլ ակտերով:

3.5. Ընկերությունը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Ընկերությունը կարող է գնել և վաճառել արտարժույթ անկանխիկ եղանակով:

3.6. Ընկերությունն ինքն է որոշում իր կողմից տրամադրվող վարկերի, փոխառությունների տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը:

3.7. Ընկերության և հաճախորդների փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են օրենքով, ինչպես նաև կողմերի միջև կնքված պայմանագրով:

ԲԱԺԻՆ IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ: ԱՅԼ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ (ՊԱՀՈՒՍՏՆԵՐ)

4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է մասնակիցների կողմից ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 244’020’000 (երկու հարյուր քառասունչորս միլիոն քսան հազար) հայկական դրամ, որը ներառում է տեղաբաշխված 300’000 (երեք հարյուր հազար) հատ սովորական (հասարակ) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 813,40 (ութ հարյուր տասներեք դրամ 40 լումա) ՀՀ դրամ

անվանական արժեքով:

4.2. Ընկերությունը կարող է լրացուցիչ տեղաբաշխել 200’000 (երկու հարյուր հազար) հատ սովորական (հասարակ) բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 813,40 (ութ հարյուր տասներեք դրամ 40 լումա) ՀՀ դրամ անվանական արժեքով, ինչպես նաև 5’000 (հինգ հազար) հատ արտոնյալ բաժնետոմս յուրաքանչյուրը 10’000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.3. Ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք է բերվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.4. Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը:

4.5. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

4.6. Ընկերությունը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով չի կարող ավելացնել կանոնադրական կապիտալն ավելի, քան Ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

4.7. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

4.8. Ընկերության փաստացի համալրված կանոնադրական կապիտալի նվազեցումն արգելվում է, բացառությամբ օրենքով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերի:

4.9. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով, որը ձևավորվում է Ընկերության զուտ շահույթի հաշվին, ընդհանուր ժողովի կողմից սահմանված չափերով կատարվող մասհանումների միջոցով:

4.10. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

4.11. ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ պահուստներ, որոնց ձևավորումն ու օգտագործումը, հատկացումների կարգը և չափերը որոշվում են ընդհանուր ժողովի կողմից:

ԲԱԺԻՆ V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ

5.1. Ընկերությունը կարող է թողարկել հասարակ (սովորական), ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր:

5.2. Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը չի կարող գերազանցել Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

5.3. Ընկերության բաժնետոմսերը մասնակիցների միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Ընկերությունը թողարկում է ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր:

5.4. Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց որպես վճարման միջոց կարող է օգտագործվել միայն ՀՀ դրամը:

5.5. Թողարկվող բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց վճարում կարող է կատարվել վճարման միանվագ կամ տարաժամկետ եղանակով՝ համաձայն բաժնետոմսերի թողարկման որոշման: Ընկերության մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է ժողովում մեկ ձայնի իրավունք:

ԲԱԺԻՆ VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԸ

6.1. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր: Ընկերության

բաժնետերերը Ընկերության գործունեության արդյունքում գոյացած վնասների համար պատասխանատվություն են կրում իրենց կողմից բաժնետոմսեր

6.2. ի դիմաց վճարված գումարով: Բաժնետոմսերի դիմաց վճարումները ոչ լրիվ կատարած բաժնետերն Ընկերության պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն նաև բաժնետոմսերի դիմաց իր կողմից չվճարված գումարի սահմաններում:

6.3. ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն լրիվ վճարված հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:

6.4. Ընկերության բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները.

գ) ենթարկվել օրենքի, իրավական այլ ակտերի և սույն Կանոնադրության պահանջներին:

6.5. Բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չկատարելու դեպքում վճարված գումարը, եթե այն մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս է, հետ է վերադարձվում գումարը վճարողին:

6.6. Բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չկատարելու դեպքում վճարված գումարը, եթե այն մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս չէ, կատարվում է վճարված գումարին համապատասխանող բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ, այնպես, որ փաստացի վճարված գումարը համապատասխանի դրան համարժեք բաժնետոմսերի քանակին: Եթե վերահաշվարկի արդյունքում վճարված գումարը պակաս է մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից, ապա նշված գումարը հետ է վերադարձվում գումարը վճարողին:

6.7. Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցն իրավունք ունի.

ա) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.

բ) անձամբ կամ ներկայացուցչի կամ իր բաժնետոմսերի անվանական սեփականատիրոջ միջոցով մասնակցել Ընկերության կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած զուտ շահույթից.

դ) ընդհանուր հիմունքներով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.

ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ Ընկերության ֆինանսական հաշվետվություններին.

զ) Ընկերության սեփական միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի չափն ավելացնելիս անվճար ստանալ համապատասխան քանակությամբ հասարակ (սովորական) բաժնետոմսեր.

է) ժողովներում իր իրավունքները պաշտպանելու համար լիազորել երրորդ անձի.

ը) հանդես գալ ժողովներում առաջարկություններով.

թ) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

ժ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական այլ ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժա) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի (միջոցների) իրեն հասանելիք մասը.

ժբ) մյուս մասնակիցների կողմից գնման նախապատվության իրավունքից հրաժարվելու դեպքում օտարել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը.

ժգ) կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված այլ գործողություններ:

6.8. Ընկերության բաժնետերերը կարող են փոփոխվել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բաժնետոմսերի օտարման միջոցով, ինչպես նաև

մասնակցի (մասնակիցների) բաժնետոմսերի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

6.9. Ընկերությունը հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերին չի երաշխավորում հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները:

6.10. Ընկերության մասնակիցներն ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը (դրանց մասը) օտարելու կամ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք: Բաժնետոմսերի փոխանցումը կատարվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

6.11. Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն.

ա) ձայնի իրավունքով մասնակցել Ընկերության բաժնետերերի ժողովին, եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը,

բ) հանդես գալ ժողովներում առաջարկություններով.

գ) Ընկերության իրավասու մարմնի կողմից շահութաբաժիներ վճարելու որոշման դեպքում ստանալ շահութաբաժիններ՝ իրենց պատանող արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի ոչ պակաս, քան 25 (քսանհինգ) տոկոսի չափով,

դ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի առնվազն 50 (հիսուն) տոկոսի չափով փոխհատուցում՝ որպես արտոնյալ բաժնետոմսի լուծարային արժեք,

ե) նախապատվության կարգով ձեռքբերել Ընկերության կողմից թողարկվող սովորական և արտոնյալ բաժնետոմսերը,

զ) իրականացնել օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

6.12. Ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է բաժնետոմսերի վաճառքի գրավոր առաջարկն ուղարկելու պահից 40 օր:

6.13. Բաժնետերերի նախապատվության իրավունքի իրականացման ժամկետ չի սահմանվում այն դեպքում, երբ իրենց բաժնետոմսերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Ընկերության բոլոր մասնակիցները միաժամանակ:

6.14. Ընկերության բաժնետոմսերն իրավահաջորդության կարգով կարող են անցնել Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին՝ ժողովի կողմից նիստին մասնակցող բաժնետերերի միաձայն որոշմամբ:

6.15. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետիրոջ բաժնետոմսերի գրավի և հետագայում գրավառուի կողմից դրանց վրա բռնագանձում տարածելն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄԸ

7.1. Տարեկան գործունեության արդյունքում Ընկերության ստացած համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

7.2. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

7.3. Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:

7.4. ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր մասնակիցներին շահութաբաժիններ վճարելու կամ չվճարելու մասին:

7.5. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:

7.6. Տարեկան շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Ընկերության այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Ընկերության մասնակիցների ռեեստրում՝ Ընկերության մասնակիցների տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.7. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

7.8. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

7.9. Ընկերության մասնակիցներին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է “Բաժնետիրական ընկերությունների մասին” ՀՀ օրենքով սահմանված դեպքերում:

ԲԱԺԻՆ VIII. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ: ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ:

8.1. Ընկերության հիմնական միջոցների և իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, օտարման, գրավադրման ու դրանց հետ կապված ցանկացած այլ գործարք, անկախ դրանց գնից, ինչպես նաև Ընկերության կապիտալի 25 տոկոսը գերազանցող գին ունեցող գործարքները կնքվում են Ընկերության խորհրդի որոշման հիման վրա:

8.2. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա հանդիսացող գույքը և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, ընդունվում է Խորհրդի կողմից միաձայն: Եթե գործարք կնքելու մասին որոշումը Խորհրդի կողմից չի ընդունվել, ապա Խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցը Ժողովում քննարկելու մասին:

8.3. Սույն Կանոնադրության 8.2 կետով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ժողովի կողմից՝՝ դրան մասնակցող մասնակիցների (քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի) ձայների 3/4ով:

8.4. Գույքի, այդ թվում՝ օրենքով սահմանված խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի, շուկայական արժեքը որոշվում է Խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

8.5. Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգիռ անձ է հանդիսանում Խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

8.6. Գույքի շուկայական արժեքի որոշման համար անկախ գնահատողի ծառայություններից Ընկերությունը կարող է օգտվել Խորհրդի որոշմամբ:

8.7. Ընկերության գործարքներում շահագրգիռ անձ է համարվում Ընկերության փոխկապակցված անձը, որը՝

ա) հանդիսանում է գործարքի կողմ կամ մասնակցում է գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող անձին փոխկապակցված անձ է:

8.8. Ընկերության գործարքներում շահագրգռվածության առկայության դեպքում գործարքները կնքվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ IX. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

9.1. Ընդհանուր ժողովը (այսուհետ՝ "Ժողով") Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: ժողովները կարող են լինել տարեկան կամ արտահերթ: ժողովները գումարվում են մասնակիցների համատեղ նիստի կամ հեռակա քվեարկության (հարցման) միջոցով: Տարեկան ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

9.2. ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ.

բ) Ընկերության վերակազմակերպումը.

գ) Ընկերության լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

է) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

ը) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը.

թ) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.

ժ) Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության վերստուգողիընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Ընկերության վերստուգողի ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

ժբ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

ժգ) օրենքով սահմանված դեպքերում Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության

իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.
ժդ) ժողովի վարման կարգը.
ժե) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.
ժզ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
ժէ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.
ժը) շահագրգռվածությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
ժթ) խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
ի) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
իա) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (խորհրդի նախագահի կամ անդամի, տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
իբ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.
իգ) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.
իդ) հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.
իե) հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավունքը վերապահված չէ խորհրդին.
իզ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.3. Սույն կանոնադրության 9.2 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության խորհրդին, ինչպես նաև Ընկերության գործադիրտնօրենին, նրա տեղակալներին, Ընկերության գլխավոր հաշվապահին (այսուհետ՝ գործադիրմարմնի անդամներ) կամ այլ անձի:

9.4. ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 9.2 կետի ”բ”, “գ”, ”ը” և “ժբ” կետերում նշված հարցերի: Տարեկան ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Ընկերության ժողովի հեռակա նիստերը գումարվում են Ընկերության կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված ժողովի որոշումներն օրինական ուժ ունեն, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով քվեարկությունը կատարվում է օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ժողով գումարելու դեպքում քվեաթերթիկները տրամադրվում են մասնակիցներին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 15 օր առաջ: Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ժողովի գումարման դեպքում տրամադրված քվեաթերթիկների ստացման վերջին օր է համարվում ժողովի գումարման ամսաթվին նախորդող աշխատանքային օրը:

9.5. ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

9.6. Ընկերության ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակիցները՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Ընկերության մասնակիցների անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

բ) Ընկերության մասնակից չհանդիսացող Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Ընկերության վերստուգողը՝ որպես դիտորդ.

դ) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի օրակարգի հարցերում).

ե) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

զ) Ընկերության ղեկավարները՝ որպես ժողովի օրակարգում ընդգրկված հարցերով զեկուցողներ:

9.7. ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա: ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 45 օր առաջ: Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

9.8. ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

9.9. ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը պետք է տվյալներ պարունակի Ընկերության յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Ընկերության կանոնադրական կապիտալում նրան պատկանող մասնակցության մասին, որոնք պետք է լինեն ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի:

9.10. ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակը տրամադրվում է ծանոթացման նպատակով Ընկերության այն մասնակիցներին, որոնք գրանցված են Ընկերության մասնակիցների ռեեստրում:

9.11. Ընկերության մասնակցի պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում նրա ընդգրկման մասին:

9.12. ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Ընկերության մասնակիցների խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

9.13. Ընկերության արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար: Արտահերթ ժողովները գումարվում են Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ընկերության գործադիր մարմնի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակցի (մասնակիցների) պահանջով, եթե պահանջը ներկայացված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ներկայացված օրակարգի հարցերը սույն կանոնադրությամբ վերապահված են Ժողովի իրավասությանը:

9.14. Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող մասնակցի (մասնակիցների) կողմից

սահմանված կարգով պահանջ ներկայացնելու դեպքում Խորհուրդը պարտավոր է 10 օրվա ընթացքում որոշում ընդունել արտահերթ ժողովի գումարման մասին և Ժողովը գումարել պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Խորհրդի կողմից ժողով չգումարելու դեպքում ժողովը կարող է գումարվել պահանջը ներկայացրած անձանց կողմից՝ սույն Կանոնադրությամբ ժողով գումարելու համար սահմանված կարգով:

9.15. ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը վայրը և կարգը, ինչպես նաև մասնակիցներին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, մասնակիցներին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Խորհուրդը՝ օրենքի պահանջներին համապատասխան:

9.16. Բաժնետերերի ցուցակում մասնակցի կողմից տիրապետվող ձայների կազմում չեն հաշվարկվում այն բաժնետոմսերը, որոնց արժեքը լրիվ վճարված չէ:

9.17. ժողովի գումարման մասին Խորհուրդը ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակցիը կամ նրա բաժնետոմսերի անվանական սեփականատիրոջը և այլ անձանց ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ: Ժողովի գումարման մասին ծանուցումն ու ժողովի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ նյութերը բաժնետերերին են հանձնվում առձեռն կամ ուղարկվում են էլեկտրոնային եղանակով՝ բաժնետիրոջ կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով, կամ պատվիրված բաժնետիրոջ նախընտրած հասցեով:

9.18. ժողովում հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց լրիվ վճարված սովորական բաժնետոմսերին համամասնական ձայնի իրավունք:

9.19. ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե դրան մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող Ընկերության մասնակիցները (նրանց ներկայացուցիչները): Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության մասնակիցների գրանցում: Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների նոր ցուցակ չի կազմվում և հաստատված օրակարգի փոփոխություն չի կատարվում: Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, ե դրան մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին տիրապետող Ընկերության մասնակիցները (նրանց ներկայացուցիչները):

9.20. Քվեարկությունը ժողովում իրականացվում է "Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը: Ընկերության քվեարկող բաժնետոմս է համարվում Ընկերության կողմից թողարկված և տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսը:

9.21. Քվեաթերթիկների միջոցով քվարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում:

9.22. ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Սույն կանոնադրության9.2 կետի "ա", "բ", "գ","դ", "զ","ը" և "ժթ" ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4ով:

9.23. Սույն կանոնադրության 9.2 կետի "բ" և "ժա" ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

9.24. Ժողովի արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, Ժողովի ավարտից հետո 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը: ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

ԲԱԺԻՆ X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

10.1. Ընկերության խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք օրենքով և սույն Կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

10.2. Ընկերության խորհրդի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 (երեք) անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են Ընկերության տարեկան ժողովում Ընկերության ներկա մասնակիցների կողմից, իսկ Ընկերության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ժողովում Ընկերության ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով: ժողովին Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության մասնակիցները, ինչպես նաև Խորհուրդը:

10.3. Ընկերության այն մասնակիցները, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

10.4. Խորհրդի անդամ կարող է լինել ՀՀ քաղաքացի կամ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է օրենքներով և Կենտրոնական բանկի կողմից սահմանված վարկային կազմակերպության ղեկավարներին ներկայացվող պահանջներին:

10.5. Խորհրդի անդամները կարող են վարձատրվել: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ժողովի կողմից: ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

10.6. Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

Ընկերության խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.

բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.

դ) նախագահում է ժողովում.

ե) կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը (առկայության դեպքում),

զ) ստորագրում է ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը (կանոնադրություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն).

է) Խորհրդի անդամների, գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև Խորհրդի կողմից նշանակվող Ընկերության այլ ղեկավարների հետ կնքում է աշխատանքային և այլ պայմանագրեր.

ը) Խորհրդի անդամների, գործադիրմարմնի անդամների, ինչպես նաև Խորհրդի կողմից նշանակվող Ընկերության այլ ղեկավարների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված որպես գործատուի ներկայացուցիչ.

թ) Ընկերության անունից կնքում է աուդիտային ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի այլ անդամ:

Ընկերության խորհրդի նախագահի հետ պայմանագիրը Ընկերության անունից կնքում է ժողովի կողմից լիազորված անձը:

10.7. Ընկերության խորհրդի իրավասություններն են՝

ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.

բ) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը.

գ) ժողովների օրակարգի հաստատումը.

դ) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը.

ե) Ժողովին սույն կանոնադրության 9.2 կետի «բ», «ժգ», «ժզ», «ժէ-ի» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովների քննարկմանը.

զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ.

է) այլ արժեթղթերի տեղաբաշխումը, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

ը) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված կարգով.

թ) օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ժ) Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը, դրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գործադիր տնօրենի, վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգն ու պայմանները հաստատումը.

ժա) Ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

Ժբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

ժգ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

ժդ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

ժե) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժզ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

ժէ) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը, այդ Ընկերություններին մասնակցությունը, եթե ժողովի որոշմամբ այդ իրավասությունը վերապահված է խորհրդին և, եթե այդ մասնակցությունն իրենից ժողովի հաստատում պահանջող խոշոր գործարք չի ներկայացնում.

ժը) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

ժթ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից ժողովի հաստատում պահանջող խոշոր գործարք չի ներկայացնում.

ի) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

իա) շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքումը.

իբ) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

իգ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

իդ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իե) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

10.8. Սույն կանոնադրության 10.7 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը

վերապահվում է Ընկերության խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմինների կամ այլ անձանց:

10.9. Առնվազն տարին մեկ անգամ Ընկերության խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը):

10.10. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Ընկերության խորհուրդը քննարկում է Ընկերության գործադիր տնօրենի հաշվետվությունը:

10.11. Ընկերության խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Ընկերության խորհրդի նիստերը գումարում է Ընկերության խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի, վերստուգողի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

10.12. Խորհրդի նիստերը կարող են անցկացվել և դրանում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ ընդունվել նաև այն դեպքում, երբ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում:

10.13. Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել և անցկացվել հեռակա կարգով բացառապես անհետաձգելի հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու դեպքում: Խորհրդի նիստերն հեռակա կարգով գումարումն անցկացումը կատարվում է հարցման ձևով՝ քվեաթերթիկների միջոցով:

10.14. Սույն Կանոնադրության 11.7 կետի “գ”, ”դ”, ”թ” և ”ժգ” կետերում նշված, ինչպես նաև Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Ընկերության Խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Ընկերության Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

10.15. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են Խորհրդի անդամների կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ սույն կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած Խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

10.16. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Ընկերության գործադիր տնօրենի մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Ընկերության գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

10.17. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) նիստին մասնակցած անձինք.

գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր Խորհրդի անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

ԲԱԺԻՆ XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

11.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալ կամ տեղակալներ, որոնք փոխարինում են գործադիր տնօրենին վերջինիս բացակայության ընթացքում:

11.2. Ընկերության գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, գործադիր տնօրենի տեղակալները և գլխավոր հաշվապահը՝ Խորհրդի կողմից՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:

11.3. Ընկերության գործադիր տնօրենը ՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

գ) գործում է առանց լիազորագրի.

դ) տալիս է լիազորագրեր.

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

է) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

ը) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

թ) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

ժ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

Ժողովի կամ Խորհրդի որոշմամբ կարող են սահմանվել Ընկերության գործադիր տնօրենի նաև այլ իրավասություններ:

11.4. Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի, Խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են Ընկերության գործադիր տնօրենի իրավասությանը:

11.5. Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է ”Հաշվապահական հաշվառման մասին” ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

11.6. Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

11.7. Ընկերության ղեկավարներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և կատարեն Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու խելամիտ կերպով:

11.8. Ընկերությունը կամ Ընկերության այն մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի

(կանոնադրական կապիտալում մասնակցության) մեկ և ավելի տոկոսը, իրավունք ունի (ունեն) Ընկերության ղեկավարների դեմ հայցով դիմելու դատարան՝ Ընկերությանն պատճառված վնասների փոխհատուցման պահանջով:

ԲԱԺԻՆ XII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

12.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող (վերստուգող հանձնաժողով): Սույն կանոնադրության գրանցման պահին վերստուգող հանձնաժողով չի ձևավորվում և նրա լիազորություններն իրականացնում է միանձնյա վերստուգողը:

12.2. Վերստուգողը՝

ա) հսկողություն է իրականացնում Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվության վարման նկատմամբ,

բ) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը,

գ) հսկողություն է իրականացնում Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարման նկատմամբ,

դ) ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին, այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը,.

ե) Խորհրդի սահմանած ձևով և բովանդակությամբ հաշվետվություն է ներկայացնում օրենքներին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը Ընկերության գործունեության համապատասխանության վերաբերյալ, առաջարկություններ է ներկայացնում հայտնաբերված խախտումները վերացնելու և հետագայում դրանք բացառելու ուղղությամբ

զ) իրականացնում է օրենքով, Ժողովի որոշմամբ և իր կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

12.3. Վերստուգողն իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

12.4. Վերստուգողն իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:

12.5. Վերստուգողին ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով: Վերստուգողի վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ: Վերստուգող կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

12.6. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավվում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Ընկերության արտաքին աուդիտին ընտրում է Ժողովը: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Ընկերության խորհուրդը:

12.7. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից

կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր մասնակիցների պահանջով: Այդ դեպքում Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող մասնակիցները, ընդ որում, նրանք կարող են Ընկերությանց պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ժողովի որոշմամբ արդարացված է եղել Ընկերության համար: Ընկերության արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Ընկերության խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:

12.8. Ընկերությունը պարտավոր է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետներում մամուլում հրապարակել աուդիտային եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

12.9. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական, հարկային ու վիճակագրական հաշվետվություն: Ընկերությունը՝ կազմում, հրապարակում և Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական և այլ հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած պարբերականությամբ:

12.10. Ընկերության ֆինանսական (գործառնական) տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

12.11. Ընկերության գործունեության նկատմամբ վերահսկողության բացառիկ իրավունքը պատկանում է Կենտրոնական բանկին, որն այդ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ XIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1. Ընկերության գործունեությունը դադարում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարմամբ (ժողովի որոշմամբ, վարկային կազմակերպության գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ”Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին” ՀՀ օրենքով և այլ օրենքներով նախատեսված այլ սահմանված դեպքերում): Ընկերության գործունեությունը դադարում է նաև վերակազմակերպման դեպքում:

13.2. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.3. Ընկերությունը համարվում է լուծարված՝ լուծարային հանձնաժողովի գործունեության արդյունքները ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատելուց հետո:

ԲԱԺԻՆ XIV. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

14.1. Սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարվել ժողովի կողմից՝ մասնակիցների ձայների առնվազն ¾-ով:

14.2. Սույն կանոնադրության փոփոխություններն ու լրացումները ուժի մեջ են մտնում Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

14.3. ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան փոփոխությունների կատարումը, սույն կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող օրենսդրությանը: